



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent
Matt Hill, Ed.D.

7-30-2020

Միջերկրյա ընտանիքներ, աշակերտներ, աշխատակիցներ,

Նոր դպրոցական տարվա սկսվելու հետ միասին (օգոստոսի 17-ից) դուք ավելի շատ հաղորդագրություններ կստանաք դպրոցից: Այժմ նաև լավագույն ժամանակն է, որպեսզի լավ քնելու և դպրոցական կանոնավոր կարգ սահմանեք: Մկսեք մտածել սովորելու համար լուր միջավայր գտնելու, սարքավորումներն աշխատեցնելու, դպրոցական անհրաժեշտ պիտույքներ ձեռք բերելու մասին (դպրոցները և ուսուցիչները հավելյալ մանրամասներ կներկայացնեն): Սա նաև հրաշալի ժամանակ է դպրոցը սկսելուց առաջ ընտանեկան ամառային ընթերցանության գիրք գտնելու, այն կարդալու և քննարկելու համար: Իմ ընտանիքն այժմ կարդում է *Just Mercy* և *Unbroken* գրքերը:

Մենք Բրբանկի ուսուցիչների միության (BTA) հետ եկել ենք Ըմբռնման հուշագրի ([Memo of Understanding \(MOU\)](#)) վերաբերյալ փորձնական համաձայնության՝ ըստ որի աշնանը դասերը լինելու են հեռահար: Ուսուցիչները Ըմբռնման հուշագիրը կքվեարկեն հաջորդ շաբաթ, իսկ Բրբանկի Կրթական խորհուրդը այն կքննարկի և կքվեարկի խորհրդի ժողովի ժամանակ, որը տեղի կունենա օգոստոսի 6-ին, երեկոյան ժամը 7-ին: Ժողովին կարող էք հետևել [սեղմելով այստեղ](#):

Մենք շարունակում ենք աջակցել Դասակարգված դպրոցների աշխատակիցների միությանը (CSEA)՝ Փոխըմբռնման հուշագիրը (MOU) ամբողջացնելու համար:

Ծնողների Տվյալների Հաստատում (Գրանցում): Դուք դպրոցի Աշակերտական ծառայությունների բաժնից էլեկտրոնային նամակ կստանաք, որը ուղղություն կտա, թե ինչպես գրանցվել ծնողների տվյալները հաստատել (registration): Նրանք նաև հասանելի կլինեն պատասխանելու ձեր ցանկացած հարցին:

Վերինար՝ Տեխնոլոգիական օժանդակություն ընտանիքներին: Օգոստոսի 18-ին, երեկոյան ժամը 7-ին Ուսումնական Ծառայությունների բաժինը (Instructional Services) կիրականացնի առցանց դասընթացներ այն ընտանիքների համար, որոնք հետաքրքրված են ավելին իմանալ, թե ինչես կարող են օգնել իրենց երեխաներին՝ օգտագործելու այն տեխնոլոգիաները, որոնք անհրաժեշտ են տանից ուսուցումն

ապահովելու համար: Վեբինարը կտրամադրի օժանդակող տեսահոլովակներ, ծնողներին քայլ առ քայլ կբացատրի տեխնոլոգիաների օժանդակության վարժանքները և ժամանակ կտրամադրի հարց ու պատասխանի համար: Տեսահոլովակներն ու վեբինարի ձայնագրությունը հասանելի կլինի վեբինարի ավարտից հետո, ինչպես նաև կտրամադրվեն նյութերի և ուղիղ (live) հեռարձակման թարգմանությունները: Վերջիններիս հղումները կտրամադրվեն հաջորդ շաբաթվա թարմացումներում:

Տեխնոլոգիաներ: Դպրոցներն սկսում են տեխնոլոգիաներ տրամադրել բոլոր այն անձանց, որոնք խնդրել են իրենց սարքավորումներով ապահովել:

Երեխաների խնամք: Վաղը Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության բաժինը կիրառարակի դպրոցներում երեխաների խնամքի նոր ուղեցույցը: Այս ուղեցույցին ծանոթանալուց հետո մենք ձեզ կտեղեկացնենք, թե ինչ տարբերակներ կլինեն աշնանը երեխաների քնամքի համար:

Ինքնուրույն ուսման ակադեմիա (ILA): Եթե հետաքրքրված եք Ինքնուրույն ուսման ակադեմիայի մոդելով, ապա լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք էլեկտրոնային նամակ ուղարկել johnparamo@burbankusd.org հասցեին մինչև **հուլիսի 31-ը**:

Ընթացիկ նորությունները հասանելի են հետևյալ կայքէջում՝ <https://www.burbankusd.org/Reopening>.

Հաճախակի տրվող հարցերին կարող եք ծանոթանալ այստեղ՝ <https://www.burbankusd.org/reopeningfaqs>: **Կարող** եք ձեր առաջարկներն ուղղարկել այստեղ՝ <https://www.burbankusd.org/reopeningfaqs>: Խնդրում ենք նկատի ունենալ, որ վերաբացման վերաբերյալ բոլոր փաստաթղթերը անգլերենով, իսպաներենով և հայերենով հասանելի են մեր կայքէջում՝ <https://www.burbankusd.org/Reopening>: **Կորոնավիրուսի մասին մեր նախորդ լրացումները հասանելի են այստեղ՝** <https://www.burbankusd.org/COVID-19>:

Աշխատելով միասին՝ մենք ստեղծում ենք ավելի ամուր ԲՄԴՇ:

Հոգատարությամբ,



Դոկտոր Մաթ Հիլլ
Գերատեսուչ